

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը կանաչ ապագա է ստեղծում Համայնքների Համար

Ծրագրի Համայնքային ծառատունկ բաժինը տնկել է 56,000 ծառ 2009 թվականի ընթացքում

Հայաստան ծառատունկ ծրագիրը («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ), 2009 թվականի ընթացքում, տնկել է ավելի քան 56,000 ծառ Հայաստանի տասնյակից ավելի քաղաքային և գյուղական Համայնքներում իր Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում: Կարին և Խաչպար տնկարաններում արտադրված բարձրորակ պտղատու և դեկորատիվ տնկիներից 56,244 ծառ տնկվեց նախորդ տարի՝ ելնելով Համայնքների կողմից ծառերի հսկայական պահանջից, ինչպես նաև Հայաստան ծառատունկ ծրագրի աշխատակիցների բարձր մասնագիտական կարողության շնորհիվ: Սա, թերևս, Հավելումն էր մեկ միլիոն տնկիների, որոնք տնկվեցին 2009 թվականին Լոռվա մարզի որոշ տարածքներում:

«Մենք Հպարտությամբ պետք է նշենք, որ այս աշնանը տնկել ենք 27,822 դեկորատիվ և պտղատու ծառ, իսկ գարնանը՝ 28,422», նշեց Համայնքային ծառատունկ ծրագրի ղեկավար Անահիտ Ղարիբյանը: «Համայնքային ծառատունկ և տնկարանային ծրագրերի աշխատակիցների միահամուռ ջանքերով, մենք բաշխեցինք այս բարձրորակ տնկիները Հայաստանի ավելի քան տասն շրջաններում՝ ներառյալ Արմավիրը, Լոռին, Վայոց Ձորը, Տավուշը և Արցախը:»

Կազմակերպության ծրագրերը շահավետ են Համայնքների Համար, քանի որ ներառում են ծառատնկման աշխատանք, որն ապահովում է ոչ միայն ապրուստի միջոցներ, այլ նաև բերք և մթերքի անվտանգություն: 2009 թվականին մեր կողմից տնկված ծառերը տվեցին 200,665 կգ մրգի բերք:

Հայաստան ծառատունկ ծրագրի կողմից տնկված մրգատու ծառերը ներառում են հետևյալ տեսակները՝ ծիրանենի, վայրի խնձորենի, տանձենի և դեղձենի, ինչպես նաև ընկուզենի և պիստակենի: Բերքը Հավաքվեց երկրի մոտ 118 տարածաշրջաններում և կիրառվեց դպրոցներում, հիվանդանոցներում և Համայնքային այլ Հաստատություններում:

Նախորդ տարվա ընթացքում Համայնքային ծառատունկ ծրագիրը, իր հետ Համագործակցող կազմակերպությունների հետ միասին, իրականացրեց ծառատունկի մի շարք դիտարժան միջոցառումներ: Աշնանը, Սինոպսիս Հայաստանի աշխատակազմի և իրենց ընտանիքների հետ Համատեղ, 500 մշտադալար տնկվեց Մալաթիա Սեբաստիա Համայնքում՝ Սուրբ Երորդություն եկեղեցու բակում, որը «Էյ Թի Փի»-ի իրականացրած ծառատնկման օրինակելի վայրերից է:

Շարունակ կրկնվող Համագործակցության վառ օրինակ է Հայաստան ծառատունկ ծրագրի և HSBC բանկի կողմից նախաձեռնած ծառատունկը Դիակոնիա Հույսի ավանդում: Ավանի բնակիչների Հետ միասին, «Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամի և HSBC բանկի աշխատակիցներն իրենց ընտանիքներով տնկեցին 500 մրգատու և դեկորատիվ ծառ ավանի տնամերձ այգիներում:

«Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամը սկսեց աշխատել անապահով ընտանիքների Համար նախատեսված այս ավանդում 2005 թվականից, երբ դեռ շատ քիչ ծառեր կային այստեղ: Այսօր, Հույսի ավանը մի կանաչ և գեղատեսիլ թաղամաս է՝ լի մրգատու և դեկորատիվ ծառերով, որոնք տնկել է «Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամը:

«Մենք Հաճույքով ենք օժանդակում Դիակոնիա Համայնքին, քանի որ այս ծրագիրը տրամադրում է տուն և արժանապատիվ կեցություն Հայ ընտանիքներին: «Էյ Թի Փի»-ի օգնությամբ Դիակոնիան դարձել է գեղեցիկ իր ծաղիկներով, ծառերով և մրգերով: Շնորհակալություն բոլորիդ՝ այս ծրագիրը իրականացնելու Համար», նշեցին «Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամի նվիրատուները՝ Դիակոնիա կատարած այցից հետո:

«Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամը կազմակերպել է ծառատնկման նմանատիպ աշխատանքներ Հայաստանի տարբեր շրջանների դպրոցներում, եկեղեցիներում և այլ Հաստատություններում: Հնաբերդի դպրոցը, Հայաստանում Ամերիկյան Համալսարանը, Հայ Ասպետ ՀԿ-ն, Ծիծեռնակաբերդի Հուշահամալիրը և շախմատի ակադեմիան մի քանիսն են բազմաթիվ այն վայրերից, որ կանաչապատվել և գեղեցկացվել են «Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամի Համայնքային ծառատունկ ծրագրի կողմից:

«Մենք Հպարտ ենք մեր բոլոր ծրագրերով, և յուրաքանչյուր ծառատունկի պատմությունն լի է կյանքով և հույսով դեպի ապագան: Այս տարին մեզ Համար նշանավորվեց էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի կողմից մեզ տրված շնորհակալագրով», ավելացրեց Ղարիբյանը: Այն մեզ տրվեց ի նշան էջմիածին քաղաքում «Էյ Թի Փի» բարեգործական Հիմնադրամի կատարած աշխատանքի՝ սկսած 1995 թվականից, որտեղ կազմակերպությունը տնկել է ավելի քան 20,000 ծառ քսան տարբեր Հաստատություններում, ներառյալ եկեղեցիներ և դպրոցներ:

Սկսած 1994 թվականից Հայաստան ծառատունկ ծրագիրը տնկել է ավելի քան 3,500,000 ծառ մեր երկրի 800-ից ավելի վայրերում, և Հարյուրավոր աշխատատեղեր են ստեղծվել կարիքավոր Համայնքների Համար: Կազմակերպության երեք կարևորագույն նպատակներն են՝ ծառատունկը, Համայնքի զարգացումը և աղքատության կրճատումը, բնապահպանական կրթությունը: